Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԴԱՂՏՆԻ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

231 թ.

# ԲՅՈՒԼԼԵՏԵՆ

## ԿԿԲ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ

№ 2 16-Ն ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1928 Թ. № 2

ԹԻՖԼԻՍ

ԳԱՂՏՆԻ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք։

# ԲՅՈՒԼԼԵՏԵՆ

## ԿԿԲ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Գ 31

A I/80070

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

№ 2 16-Ն ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1928 Թ. № 2

ԹԻՖԼԻՍ

Հայկական Հրաձիգ Դիվ․ Քաղբաժնի
Հրատ—խմբագր․ մաս

Ե ր և ա ն

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 477
Գ/ ՍՈԵՊ. 1076 Բ. ՏԻՐԱԺ 2000

ԳԱՂՏՆԻ

# ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

№ 6/5

Ք. Թիֆլիս. 16 Հոկտեմբերի 1928 թ.

Հայտարարվում է ղեկավարության և գործադրության համար Կովկասյան Կարմրադրոշ բանակի՝ 1928–29 թ. ձմրան շրջանի կուսակցական և քաղլուսավորական աշխատանքի պլանային դիրեկտիվը:

Բանակի Քաղվարչության պետ
ՎԱՍԻԼՑԵՎ

# ՊԼԱՆԱՅԻՆ ԴԻՐԵԿՏԻՎ

## ԿԿԲ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## 1928—29 ԹՎԻ ՁՄՌԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

*Կարմիր բանակի հիմնական հերթական խնդիրը բղխում է ժամանակակից միջազգային դրության այն գնահատականից, վոր տվել է Կոմունիստական Ինտերնացիոնալի VI կոնգրեսը:*

*Այդ խնդիրն է՝ ավելի մեծ, քան յերբևէ ուժերի լարում, մարտական կորովի և պատրաստության բարձրացման համար: Այդ ուղղությամբ պետք է կատարվի բանակի կուսակցական կազմակերպության և քաղապարատի գործունեյությունը, պետք է իրագործվի նրանց կազմակերպող դերը կարմիր բանակայինների ու պետերի կազմի անկուսակցական կադրերի միջև:*

*Նախընթաց ուսումնական տարվա ընթացքում Կովկասյան Կարմրադրոշ բանակը համընթաց ամբողջ ԲԳԿԲ հետ կատարեց իր մարտական ռազմական ու քաղաքական պատրաստության ուժեղացման և կատարելագործման մեծ աշխատանքը: Առաջին անգամ նախընթաց տարում այնչափ լայն ծավալված եյին բանակի պետկազմի պատրաստության պարապմունքները՝ ռազմական ու ռազմաքաղաքական խաղերի, վարժությունների և դաշտային յելույթների ամբողջ սիստեմի միջոցով:*

Մեր մարտական պատրաստությունն ապահովող՝ բանակի մարտական պատրաստության ընդհանուր աճման ֆոնի վրա մենք ունենք նաև մի շարք թերություններ, վորոնց վերացումը ձմրան շրջանի հիմնական խնդիրն է։

Հրաձգային ու մարտավարական պատրաստության բարձրացման հետ միասին, զորամասերի մեծ մասում նկատվում է կրտսեր պետերի կազմի անհատական թույլ հրաձգային պատրաստություն։ Տեխնիկական զորքերը վորոշապես ցածրացրել են իրենց հրաձգային պատրաստության մակարդակը։ Միջին հրամատարի մարտավարական պատրաստությունն, վորն ընդհանուր առմամբ բավարար է, թույլ է գործնական տեսակետից հրամատարական կազմի մի մասի մեջ։ Իր ստորաբաժանումները բավականաչափ հաստատուն ձևով ղեկավարելու համար չկան սովորքներ։ Մշակել այդ սովորքները, վորպեսզի համապատասխան ստորաբաժանումները զգան իրենց հրամատարի հմուտ ղեկավարությունը—ահա հիմնական խնդիրներից մեկը։ Պետկազմի այլ խմբակների պատրաստության մեջ մարտավարական տեսածիրի ընդհանուր զարգացման հետ միասին հայտաբերվում են թերություններ մարտի այնպիսի հմուտ կազմակերպման մեջ, վոր համաձայն իրենց մտադրությունների մինչև վերջ հասցնեն և նրանց կատարումը։ Բացակայում են նաև բավականաչափ սովորքներ մարտական խնդիրների մեթոդական լուծման մեջ։ Կարմիր բանակային կազմի պատրաստության գործում հարկավոր է առանձնապես չեշտել նրա ֆիզիկական մարզվածության և նրա թե՛ մասնագիտական և թե՛ հրաձգային ու դաշտային վարժության մեջ ձեռք բերած նվաճումները։

Բոլոր դաշտային պարապմունքներում և մանյովրներում մարտիկների կողմից ցուցահանված է մեծ հետաքրքրություն և ցանկություն՝ վորքան կարելի յի լավ կատարել մարտական հանձնարարությունը։ Ձմրան

շրջանի խնդիրն է՝ դաստիարակել նորեկ մարտիկի մեջ հետաքրքրություն դեպի իր զենքը, դեպի իր ստորաբաժանման աշխատանքը, դեպի իր զորամասը, ձգտելով, որ հենց սկզբից լինի ակտիվ ու գիտակից վերաբերմունք դեպի բոլոր պարապմունքները:

Ձմրան շրջանը դաստիարակության բնագավառում պետք է ավարտվի Կարմիր բանակի մարտիկի հաստատուն և ճշգրիտ ըմբռնումով, մարտական պատրաստության բնագավառում պետք է ճանաչել և կարողանալ տիրել իր զենքին, կարողանալ հմտությամբ գործել իր ջոկի, դասակի կազմով, շրջանը պետք է ավարտվի այդ ստորաբաժանումների մարտական կոփվածությամբ:

Զորքերի առանձին տեսակների պատրաստության բնագավառում նույնպես նկատվում են միանգամայն բավարար արդյունքներ: Նկատվում է մեծ համաձայնեցում զորքերի առանձին տեսակների աշխատանքի մեջ, գլխավորապես հրետանու և հետևակի աշխատանքում գնդերի ու դիվիզիաների կազմով կատարած միասին վարժություններում: Ջոկատային վարժությունները նպաստեցին զորքերի առանձին տեսակների մերձեցմանն ու այն պարտականությունների փոխադարձ հասկացման ամրանալուն, որ նրանցից յուրաքանչյուրը կոչված է կատարելու մարտում:

Բանակի զորամասերի քաղպարատն ու կուսակցական կազմակերպությունները ավելի մոտ կանգնեցին ուսուցմանն ու դաշտային աշխատանքներին, իրականացնելով գործնապես ու կոնկրետ ձևով մարտական պատրաստության յուրաքանչյուր աստիճանի քաղաքական ապահովումը:

Նախընթաց տարվա կարևորագույն նվաճումների թվին պետք է դասել Անդրկովկասի կուսակցական, խորհրդային և մասսայական հասարակական կազմակերպությունների լուրջ ուշադրության գրավումը դեպի յերկրի պաշտպանության գործնական հարցերը (փորձնական զորահավաք, մանյովրներ, հակօդային

պաշտպանություն) և բնակչության ռազմականացման լայն ձևերով աշխատանքի ծավալմանը:

Պետկազմի աշխատանքներում անհրաժեշտ է ապահովել նախաձեռնության ցուցահանում, իր ստորաբաժանումների պատրաստության համար պատասխանատվության զգացմունքի ամրացում: Ձմռան շրջանը պետք է ապահովի կրտսեր հրամատարի մեջ իր ջոկն ինքնուրույն և հաստատուն ղեկավարելու գործնական սովորքներ: Պետք է ապահովել՝ մինչև պետկազմի կողմից իր բոլոր ընդունակությունների հայտաբերման հնարավորությունը՝ իր ստորաբաժանման պատրաստության և մարտական կոփման գործում: Մատնանշված դրվածքը նախադրյալ է հանդիսանում կրտսեր ու միջին պետի ավելի հաջող և վստահ գործողությունների համար դաշտային պարագայում:

Ավագ պետերի կողմից անհրաժեշտ է ամենից առաջ կենդանի դիտողություն և ղեկավարություն դեպի ստորադրյալ պետերի աշխատանքը, հաշվի առնելով ստորաբաժանման կոնկրետ վիճակն ու պետի անհատական առանձնահատկությունները: Վարժական պլաններում պետք է նախատեսնել թե՛ պետերի կազմի և թե՛ կարմիր բանակայինների բանվորական ժամանակվա ամենից խնայողաբար ու ռացիոնալ օգտագործումը, վորպեսզի յուրաքանչյուր պարապմունք տա համապատասխան վարժական եֆֆեկտ: Դրան կարելի յե հասնել ամենից առաջ պարապմունքների պատշաճ նախապատրաստությամբ ու կազմակերպությամբ: Պետք է ապահովված լինի վարժական պարապմունքների ռեյալ իրագործվող ծրագիրը, վորը լիովին պետք է համաձայնեցրած լինի զորամասի ղեկավարող ապարատի բոլոր օղակներով:

Առաջիկա ժամանակաշրջանում անհրաժեշտ է ավելի լայն կազմակերպել Անդրկովկասի հանրապետությունների քաղաքացիական բնակչության ռազմականացման աշխատանքը, սիստեմատիկ կապի միջոցով և

*ոգնություն ցույց տալով այն կազմակերպություննե-րին, վորոնք աշխատում են Խորհրդային Միության պաշտպանունակության ամրացման համար։*

*Բաղվարչությունն առաջադրում է ԿԿԲ զորամա-սերի քաղմարմիններին, կուսկազմակերպություններին ու քաղապարատներին ձմրան շրջանի համար հետևյալ հիմնական խնդիրները.*

1. Ամբողջ ձմրան շրջանի ընթացքում պետք է ամե-նաակտիվ կերպով կիրառվի ԽՍՀՄ ՀՌԽ վորոշումը կարմիր բանակի քաղբարոյական դրության մասին և բջիջների քարտուղարների 2-րդ համաբանակային խոր-հրդակցության վորոշումները: Պետք է անընդհատ վեր-հսկողություն լինի նրանց կատարման համար:

*«Շրջանների Հեղափոխական-Ռազմական խոր-հուրդները, զորամարմինների, դիվիզիաների ու գնդե-րի հրամատարները, կոմիսարները և քաղոգնական-ները չպետք է թողնեն առանց պատշաճ հետաքննության ու հանցավորների համապատասխան պատժի վոչ մի զանցառում, վորը խեղաթյուրում է ճիշտ քաղաքական գիծը և ընդունակ է թուլացնող ազդեցություն գործել զորքերի քաղ-բարոյական կայունությունը, հե-տագայում իրազեկելով վերադաս մարմնին թե՛ խեղաթյուրման փաստի և թե՛ նրա ուղղելու մասին ձեռք առած միջոցառումների մասին»—այս դի-րեկտիվը պետք է իրացվի լիակատար անշեղությամբ: Առանձնապես լուրջ ուշադրություն դարձնել՝ բացասա-կան յերևույթներին ցույց տրված* հասարակական-քա-ղաքական արձագանքին:

*Հիվանդագին յերևույթների դեմ մղած պայքարում գլխավոր տեղն առաջվա պես* պետք է գրավի պետկազմի ու կարմիր բանակայինների միջև յեղած կապի ամրաց-ման, բյուրոկրատական խեղաթյուրումների վերացման հարցին՝ ռազմական ապարատի բոլոր բաղադրիչ մա-սերում:

*Պետք է մոբիլիզացիայի յենթարկել կուսակցական կազմակերպությունների, քաղաքական ապարատը, պետերի կազմը, զինթղթակիցներին և ամբողջ կարմիր բանակային մասսային՝ կռվելու համար «աչքին թոզ փչելու» դեմ: «Աչքին թոզ փչելու» դեպքեր դեռ ևս կան Կովկասյան Կարմրադրոշ բանակում, և այն էլ յերբեմն կուսակցության անդամների մասնակցությամբ: Այդ խայտառակ յերևույթը, վորն անմիանելի յե Կարմիր բանակի դասակարգային բնույթին և վնասում է նրա մարտունակությանը, պետք է միանգամայն վերացվի ամենախիստ թե՝ հասարակական և թե՝ պատժիչ ազդեցությամբ:*

2. *Մասսայական կուսակցական-քաղաքական աշ*խատանքում հիմնական տեղը պետք է պատկանի այն մոմենտներին, վոր կապված են զորանոցը «գյուղացիական տրամադրություններ» մտնելու հետ: *Մի կողմից ուժեղ հարձակումը կուլակի դեմ և նրա դիմադրությունը և մյուս կողմից՝ վորոշ տնտեսական դժվարությունները նաև այս տարում պահանջում են կուսկազմակերպությունների և քաղապարատի չթուլացող ուշադրությունը դեպի «գյուղացիական տրամադրությունների» հարցը, վորոնք անկասկած կբարձրանան* 1906 *թվի համալրման գալով:*

3. Իդեոլոգիական ճակատի կարևորագույն տեղամասը հանդիսանում են ինտերնացիոնալ դաստիարակության հարցերը կուսակցական կազմակերպության ներսում, կոմյերիտմիության մեջ, պետկազմի ու կարմիր բանակայինների միջև: *Կոմինտերնի* VI *կոնգրեսի դիրեկտիվը Կոմինտերնի բոլոր սեկցիաների ինտերնացիոնալացման ուժեղացման մասին ամբողջ աշխարհի աշխատավորների միջազգային կապերի ու յեղբայրական համերաշխության ամրացման մասին, լիովին տարածվում է նաև ՀամԿԿ(բ) վրա և պետք է անշեղորեն կիրառվի մեր բանակային կազմակերպության կողմից:*

*Լուրջ ուշադրություն է պահանջվում դեպի մեծ-պետական (վելիկոդերժավնի)* շովինիզմի, տեղական նացիոնալիզմի և հակահրեյության արտահայտությունների դեմ մղած պայքարը, *վորոնք մի գործիք են կուլակության և հակախորհրդային կուսակցությունների ազդեցության համար: Այդ ուղղությամբ անհրաժեշտ է ուժեղացնել կուսակցական ղեկավարությունը վոչ միայն կարմիր բանակային մասսայի, այլ և պետկազմի նկատմամբ:*

*Ազգային զորամասերում հարկավոր է ավելի մեծ չափով, քան մինչև այժմ, արտացոլել աշխատանքներում Հանրապետությունների ԿԿ(բ) Կենտկոմների նյութերը իդեոլոգիական ճակատի հարցերի վերաբերյալ (մասնավորապես՝ Կենտկոմի պլենումների վորոշումների մշակումը):*

4. Ինքնաքննադատության լոզունգն առաջվա պես մնում է որվա կենտրոնական լոզունգներից մեկը: Պետք է հասնել այդ լոզունգի իսկական իրացման:

*Փորձը ցույց է տալիս, վոր չափազանց* դանդաղ է *ծավալվում ինքնաքննադատությունը. մի շարք կազմակերպություններում ինքնաքննադատությունը գործնապես իրականացվում է միայն կուսակցկան պետկազմի մի մասի կողմից. անչափ մեծ ուշադրություն և ժամանակ է հատկացվում վերացական, ապարդյուն 'այն հարցի քննարկմանը, թե «ինչ և վոր դեպքում կարելի յե քննադատել և ինչ չի կարելի». դեռևս չկա բավականաչափ հոգատարություն մերկացվող թերությունների լրիվ և արագ վերացման մասին, վորոշ ղեկավարող կուսաշխատավորները բավականաչափ ջեռանդով չեն ոգնում բջիջներին գործնապես մոտենալու ինքնաքննադատության կիրառմանը:*

*Մյուս կողմից ակնհայտ է, վոր մեր բջիջների անդամների լայն խավերը, սակավ բացառությամբ, ճիշտ են համաձայնեցնում ինքնաքննադատության համակուսակցական լոզունգը բանակային պայմանների առանձ-*

*նահատակությունների հետ: Ուստի հիմնովին սխալ կլիներ և բացարձակապես անթույլատրելի՝ դանդաղեցնել ինքնաքննադատության լոզունգի իրացումն այն պատրվակով, թե կարող են բանակում կուսակցական գծի ծռվածքներ առաջանալ: Նման ձևի փորձերին պետք է վճռապես վերջ տալ. յուրաքանչյուր առանձին գործնական սխալներ, լավ ղեկավարության գոյության դեպքում, կարող են հեշտությամբ չակվել աշխատանքի ընթացքում: Կուսկազմակերպության լավ ղեկավարության դեպքում ինքնաքննադատության հիման վրա հայտաբերվում են մի շարք բացասական մոմենտներ զանազան բնագավառներում, այդպիսով իսկ նախադրյալներ ստեղծելով զորամասերի կյանքի և աշխատանքի բազմակողմանի բարելավման և բանակում կուսակցության ազդեցության բարձրացման համար:*

5. Ձմրան շրջանի կենտրոնական և գլխավոր խընդիրը, վորին պետք է բևեռել ուշադրությունը, վորի կատարումը վճռական նշանակություն ունի,—դա քաղաքական մարմինների, ռազմական կոմիսարների և կուսկազմակերպությունների կուսակցական ազդեցության գործնական, ռեալ ուժեղացումն է՝ բանակի զորամասերի կյանքի ու գործունեության բոլոր կողմերի վրա:

*Այդ ուղղությամբ դեռ անհամեմատ ավելի քիչ է արված, քան թե պահանջվում է, քան թե կարելի յեր անել կուսկազմակերպությունների զարգացման այն մակարդակով, վորին հասել ենք: Ավելի մեծ հաջողություններ կան հարցի դրվածքում, նրա բացատրության, մասսայականացման մեջ (դիվիզիաների ռազմկոմների—քաղբաժնի պետերի ապրիլյան խորհրդակցություն, դիվիզիական կուսկոնֆերանսներ): Այժմ կարելի յե առաջ քաշել* գործնական աշխատանքը: *Այդ գործնական աշխատանքից կախված կլինի գլխավորապես բանակում մեր կուսակցական—քաղաքական ազդեցության աստիճանը:*

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*ԿԿԲ Քաղաքական Վարչությունը չեշտում է* կուսակտիվի և բովանդակ կուսկազմակերպության ներկուսակցական իդեյական-քաղաքական կյանքի ամենաակտիվ ծավալման անհրաժեշտությունը, *վորը ներկայումս ունի բացառիկ կարևոր նշանակություն: Այդ նշանակությունը բխում է արդի այն ամբողջ պարագայից, վորի մեջ աշխատում է կուսակցությունը: Մեր սոցիալիստական շինարարության բոլոր ակնհայտ հաջողությունների հետ միասին, մենք առաջ ենք շարժվում մի շարք միանգամայն անխուսափելի դժվարությունների ու խոչընդոտների միջով: Նահանջել այդ դժվարությունների առաջ նշանակում է հրաժարվել յերկրի ինդուստրացման վերաբերյալ կուսակցության ընդունած գլխավոր գծից: Այդ մի շարք դժվարությունների որյեկտիվ անխուսափելիությունը, նրանց պատճառները, նրանց հաղթահարման ճանապարհները հասկանալը պետք է հիմք ծառայի մեր կուսկազմակերպության բոլշևիկյան միասնության ու համախմբվածության, պետք է հիմք ծառայի մեր նորեկ կուսակցականների հիմնական դաստիարակության կոփվածության, վորը նրբազգաց արձագանքում է մեր զարգացման հակասություններին:*

*Քաղմարմիններն ու կուսակցական կազմակերպությունները պետք է իրենց տեսողության դաշտում ունենան տրոցկիստական խմբակի փշրանքների՝ իրենց գործունեությունը կենտրոնացնելու փորձերը՝ մեր դժվարությունները չարաշահելու ոգնությամբ. այդ փորձերը, ինչպես էլ վոր դրանք արտահայտվելիս լինեն, պետք է գտնեն մեր կողմից ամենայեռանդուն, ամենաանխնա դիմադրություն:*

*Դրա հետ միասին պետք է* ուժեղացնել *ուշադրությունը դեպի այնպիսի տրամադրությունների դեմ մղված պայքարը, վորոնք արդյունք են մեր յերկրում դա-*

սակարգային պայքարի անխուսափելի սրման թերագնահատման։ Այլ թեքման և դեպի այն ցույց տված հաշտողական վերաբերմունքի այդ արտահայտությունները, վոր բնորոշվում են կուլակի հետ չկռվելու ցանկությամբ, ինդուստրացման ու կոլեկտիվացման ընդդիմադրությամբ, կուսակցությունը յետ են քաշում 15-րդ համագումարի վորոշումներից։ Մեր կուսկազմակերպությունները պետք է նրբազգացությամբ ի հայտ անեն այդ արտահայտությունները և հաղթահարեն այնպիսի պայմաններում, վորտեղ կարմիր բանակային մասսայի մեջ և ճնշող մեծամասնությունը գյուղացիությունն է, և վորտեղ հնարավոր է «գյուղացիական տրամադրությունների» բարձրացում։

---

Բանակային կուսկոնֆերանսը կգումարվի դեկտեմբերի յերկրորդ կեսին։ Հերթական վերընտրությունները (ժամկետների մասին տես հավելվածում) կարվի առանձին նամակ։

Աճման կանոնավորման մասին կարվի առանձին դիրեկտիվ, յերբ կատարված կլինեն ապրիլ-սեպտեմբեր կիսամյակի ամփոփումները։

## ԲՋԻՋՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ՝ ՊՈՒՌ-ԻՆ ԿԻՑ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՀԱՄԱԲԱՆԱԿԱՅԻՆ ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ձմրան շրջանը պետք է լինի բջիջների քարտուղարների համաբանակային յերկրորդ խորհրդակցության վորոշումներն իրացնելու լայն ծավալման շրջան։

Անհրաժեշտ է ամենասուրբ ամենակարճ ժամանակամիջոցում հասնել այնպիսի դրության, վոր այդ խորհրդակցության վորոշումներն իրոք դառնան յուրաքանչյուր կուսաշխատողի, յուրաքանչյուր հրամա-

տարի համար առորյա ղեկավարության առձեռն գիրք: Անհրաժեշտ է առանց բացառության բոլոր կուսկազմակերպություններում ապահովել այդ վորոշումների սպառիչ մշակումը, ծանոթացնել նրանց հետ հրամատարական կազմին (վորոնց թվում նաև նորեկ նորմալ դպրոցավարտներին) և մասսայականացնել այդ վորոշումները 1906 թվի նորեկ կարմիր բանակայինների միջև:

## ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆԸ ՑՈՒՅՑ ՏՎԱԾ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջիկա ձմրան շրջանի խնդիրը պետք է լինի կոմյերիտմիությանն ցույց տված կուսակցական ղեկավարության իսկական ուժեղացումն ու բարելավումը սկսած ՀամԿԿ(բ) վաշտային բջիջից, խստիվ հետևելով բջիջների քարտուղարների համաբանակային 2-րդ խորհրդակցության բանաձևին:

Այդ բանաձևի կատարումն ու մշակումը ստուգելու նպատակով, կոմյերիտմիությանը ցույց տրվող կուսղեկավարության բարելավման կոնկրետ միջոցառումների արդեն ունեցած փորձի հիման վրա, քաղմարմինները ձմրան շրջանի առաջին կեսին, պետք է հրավիրեն զորամասերի կուսակցական ու կոմյերիտական ղեկավար աշխատողների կայազորային հատուկ խորհրդակցություններ, վորոնց պետք է մասնակից դարձնել կուսակցության ու ԼԿՑԵՄ տեղական կոմիտեների ներկայացուցիչներին: Առանձին դասավորված զորամասերում այդ հարցը պետք է դնել կուսակցական բյուրոների ընդլայնված նիստերի քննարկության:

Կոմյերիտական կազմակերպությունների ու նրանց աշխատանքի դրության ուսումնասիրությանը պետք է մասնակից դարձնել քաղմարմինների ամբողջ կազմին. կոմյերիտմիության հարցերին ավելի մեծ ուշադրու-

թյուն պետք է նվիրեն կուսշինարարության հրահանգիչները:

Կոմյերիտական աշխատանքի ավելի լրիվ հաշվառման ու փորձի փոխանակության նպատակով ԿԿԲ Քաղվարչությունը սահմանում է «Կոմյերիտական թերթիկի» պարբերական հրատարակում, վորը լույս կտեսնի, վորպես «Կրասնիյ Վոյին» թերթի յերկշաբաթյա հավելված: Քաղմարմինները, կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունները պետք է ապահովեն համապատասխան նյութի առաքումը թե՛ սեփական կոմյերիտական աշխատանքի և թե՛ կոմյերիտմիության ցույց տված կուսակցական ղեկավարության հարցերի վերաբերյալ: Ազգային դիվիզիաների քաղմարմինները դրա հետ միասին պետք է միջոցներ ձեռք առնեն, վորպեսզի կոմյերիտական հարցերը լուսաբանվեն դիվիզիական թերթերում:

Վորպես կոմյերիտական աշխատանքի առաջնահերթ խնդիրներ, վորոնց համեմատ պետք է կառուցվի նաև կուսակցական ղեկավարությունը, Քաղվարչությունն առաջադրում է հետևյալը·

ա) Շարունակել ծավալել աշխատանքը կոմյերիտական կազմակերպությունների իդեոլոգիական դաստիարակության, կոմյերիտական վորոշ մասի մեջ արտահայտվող խորթ ազդեցությունների հաղթահարման վերաբերյալ:

Բանակային կոմյերիտմիության ինտերնացիոնալ դաստիարակության գործում հսկայական դեր պետք է խաղա՝ կոմյերիտական կազմակերպություններում Յերիտկոմինտերնի 5-րդ կոնգրեսի վորոշումների մշակումը և կոմյերիտական ակտիվի լայն ներգրավումը կոմինտերնի 6-րդ կոնգրեսի հարցերի մշակմանը:

բ) Շարունակել կոմյերիտական խմբակների աշխատանքների ակտիվացումը՝ տեղական հարցերի լայն քննարկման, զորամասի շինարարության հարցերում կուսբջիջի ցույց տված ավելի մեծ ոգնության, և աշ-

խատանքի կենդանի ձևերի ավելի մեծ չափով կիրառելու միջոցով:

գ) Վճռական բեկում՝ դեպի զորանոցի կուլտուրական կենցաղի համար մղած պայքարի ուժեղացումը, դեպի ամբողջ կարմիր բանակային մասսայի մեջ կուլտուրական սովորքների արմատացման գործում կոմյերիտական կազմակերպությունների ունեցած ակտիվ առաջավոր դերի բարձրացումը:

դ) Իրական միջոցներ ձեռք առնելը՝ բարձրացնելու համար կոմյերիտականների ընդհանուր կրթական մակարդակը, մասնավորապես՝ կոմյերիտականների լայն մասնակցության ապահովումը հանրակրթական խմբակներում, կրուժոկներում և յերեկոյան դպրոցներում:

Կոնկրետ գործնական ցուցումներ կոմյերիտական աշխատանքի մասին առաջիկա ձմռան շրջանի համար կտրվեն ԿԿԲ Քաղվարչության հատուկ նամակում:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԵՏԿԱԶՄԻ ՀԵՏ

Պետերի կազմի հետ տարվող աշխատանքը տակավին ամենուրեք բավական չափով չի ծավալված: Զգալիապես թուլացավ նա ճամբարային հավաքների ու մանյովրաների շրջանում: Պետկազմի հետ տարվող քաղաքական աշխատանքի բացերը միանգամայն պարզ հայտաբերվեցին «գյուղացիական տրամադրությունների» առավելագույն սրման միջոցին. Հրամատարական կազմը, մանավանդ անկուսակցականը, մի շարք դեպքերում ինքը կողմորոշված չեր և պատրաստված չեր այդ տրամադրությունների հաղթահարման աշխատանքին: Ընթացիկ տարվա մարտավարական պարապմունքներն ու մանյովրները ցույց տվեցին միանգամայն անբավարար հաջողություններ՝ հրամատարական կազմին քաղուսաշխատանքին մասնակից դարձնելու գործում: Թույլ է

կազմակերպված և արտահայտվում պետկազմի հասարակական կարծիքը՝ իր միջավայրում գոյություն ունեցած բացասական, հակաբարոյական յերևույթների դեմ մղած կռվում: Զորամասերի կողմից բավականաչափ ուշադրություն չէր դարձված՝ ռազմակրթական հիմնարկներն ու ակադեմիաները մտնելու համար պետերի կազմի պատրաստության, ինքնազարգացման աշխատանքի հարցի վրա:

Շատ քիչ բան է արված պետկազմի արտածառայական կենցաղի կազմակերպման տեսակետից. պետկազմի ու նրանց ընտանիքների կուլտուրական սպասարկման գործում, պետկազմի կանանց հետ տարվող աշխատանքում:

Պետկազմի հետ տարվող աշխատանքի ուժեղացումը՝ համաձայն բանակային 6-րդ կուսկոնֆերանսի դիրեկտիվի, ամբողջ պետկազմի վրա ունեցած կուսակցական ազդեցության հետագա ուժեղացումը,—առաջիկա շրջանում բանակի կուսկազմակերպությունների ու քաղապարատի ամենալուրջ խնդիրներից մեկն է:

Ազգային դիվիզիաների քաղբաժինները պետք է մշակեն կոնկրետ ցուցումներ յերկրային զորամասերի պետկազմի հետ տարվող աշխատանքի մասին, մասնավորապես այն ժամանակամիջոցի համար, յերբ կադրերը փոխադրվում են համալրման շրջանները: Անհրաժեշտ է ձգտել, վոր յերկրային զորամասերի պետկազմըն իրոք լայն չափով ներգրաված լինի տեղական կազմակերպությունների աշխատանքին, իրոք լուրջ մոտեցում լինի դեպի ինքնազարգացման աշխատանքի կազմակերպումը:

Քաղապարատն ու կուսակցական կազմակերպությունները ավելի մեծ ուշադրություն պետք է նվիրեն պետկազմի նյութական-կենցաղային պայմանների բարելավման հարցերին՝ զորամասերի ուժերով ու միջոցներով (փոխոգնության դրամարկղների աշխատանքի բարելավում, նրանց [illegible] պետկազմի



ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

բյուջեյի կանոնավորման գործում, պետկազմի սպասարկման բարելավումը կոոպերացիայի կողմից, պետկազմի ընտանիքների բժշկական սպասարկում, ավելի մեծ ուշադրություն պետկազմի կարիքներին զորամասերի տնտեսական ապարատների կողմից)։

Անհրաժեշտ է ձգտել, վորպեսզի իրոք կիրառվեն ՊՌԽՌ–ի՝ հուլիսի 25–ի № 28364/գ. հրահանգները կրտսեր պետկազմի մասին (կցվում են սրա հետ)։

## ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Բանակի զորամասերում կարգապահության դրությունը բնորոշվում է հետևյալ ամենից հիմնական տվյալներով.

ա) Իրավախախտումների բացարձակ և համեմատական քանակի աճումով (100 հոգուն 1926/27 ձմրան շրջանի մեկ ամսում ընկել է 9,3 իրավախախտում, 1927 թվի ամրան շրջանում՝ 9,7, 1927/28 թվի ձմրան շրջանում՝ 12,4)։

բ) Իրավախախտումների ընդհանուր թվում կուլտուր–կենցաղային զանցառումների գերակշռությամբ, սակայն միաժամանակ կարմիր բանակայինների կոլեկտիվ յելույթների քանակի աճումով։

գ) Զորական կարգապահությունը կոմունիստների ու կոմյերիտականների մոտ ավելի բավարար դրություն քան թե անկուսակցականների մոտ, սակայն միաժամանակ կուսակցականների ու կոմյերիտականների միջև իրավախախտումների բացարձակ ու համեմատական աճումով՝ համեմատած 1926/27 թվի ձմրան շրջանի հետ։

Առաջիկա ձմրան շրջանում պետք է հաղթահարել վերոհիշյալ բացասական տենդենցները բանակի կարգապահության դրության մեջ։

# ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

*Չնայած ԽՍՀՄ ՀՌԽ, ԿԿԲ ՀՌԽ և ԿԿԲ ՔՎ մի շարք ուղառիչ դիրեկտիվների կարգապահության պրակտիկայի (գործնության) մեջ փոքր ի շատե զգալի բարելավումները տակավին չեն յեղել: Բավական է մատնանշել, վոր վերակարգերն ու կալանքները կազմում են* 1926/27 *թվի ձմրան շրջանի տուժերի ընդհանուրի թվի* 60 *տոկոսը·* 1927 *թվի ամրան շրջանի* 72 *տոկոսը,* 1927-28 *թվի ձմրան շրջանի՝* 56 *տոկոսը: Վերակարգերի ու կալանքների տոկոսների իջեցումը համեմատած* 1926/27 *թվի հետ միանգամայն չնչին է, մինչդեռ մեծ է թըռիչքը դեպի վեր* 1927 *թվի ամրան շրջանում: Դիվիզիաներից մեկի տվյալներն այն մասին, վոր* 1928 *թվի ամրան շրջանում վերակարգերն ու կալանքները կազմել են բոլոր կարգապահական տուժերի* 82 *տոկոսը, իսկ դիվիզիայի կապի վաշտում՝* 99 *տոկոսը, և հեծելավաշտում՝ բոլոր հարյուր տոկոսը, հիմք են տալիս յեզրակացնելու, վոր հնարավոր է այդ տուժերի տոկոսի նոր աճումը նախընթաց ամրան շրջանում նաև բանակի այլ զորամասերում:*

*Թերություններն ու կարգապահական պրակտիկայի ծռվածքներն ավելի ու ավելի նկատելիորեն (կարմիրբանակային մասսայի ակտիվության ու պահանջկոտության աճման հետ) սկսում են արտահայտվել բանակի քաղաքական-բարոյական դրության վրա, ստանալով ամենալուրջ քաղաքական նշանակություն:*

*Առաջիկա ձմրան շրջանի խնդիրն է՝* ամենավճռական կերպով բեկում կատարել բանակի զորամասերում կարգապահական պրակտիկայի մեջ դեպի նրա բարելավման կողմը և այն բոլոր դեպքերում համաձայնեցնելու կարգապահական կանոնագրքի պահանջներին, վորը ԲԳԿԲ կարգապահական քաղաքականությունը վորոշող հիմնական փաստաթուղթն է:

Սակայն այս դիրեկտիվն ամենևին չպետք է նկատվի, վորպես պահանջկոտության ու կարգապահության մեղմացում, «ընդհակառակը, կարգապահության պրակտիկայի բարելավումը պետք է իր անմիջական հետևանքն ունենա նպատակահարմար պահանջկոտության բարձրացումն ու կարգապահության վորակական բարձրացումը (ԽՍՀՄ ՀՌԽ ս|թ. 27/VI վորոշումից):

Կոնկրետ անհրաժեշտ է. ա) մինչև 1906 թվի համարման ընդունելությունը չափազանց խնամքով ուսումնասիրել նախընթաց ամրան շրջանի կարգապահական քաղաքականության գծի աղավաղումների պատճառները և այդ ուսումնասիրության հիման վրա կոնկրետ ցուցումներ տալ մինչև վաշտերին ներառյալ, սահմանելով այդ ցուցումների կիրառման առորյա վերահսկողություն, մանավանդ այն անձանց վերաբերմամբ, վորոնք ամենից խիստ են հայտաբերել կարգապահական պրակտիկայի հիմունքների անգիտացումն ու զարգացումը: բ) ժամանակին միջոցներ ձեռք առնել ապահովելու համար կարգապահական ճիշտ պրակտիկան 1906 թվի համարման նկատմամբ: գ) Ե՛լ ավելի մոտեցնել զորամասերի քաղապարատն ու կուսակցական կազմակերպությունները կարգապահական պրակտիկայի քաղաքական կանոնավորմանը (հրամատարությանը ժամանակին արած ինֆորմացիոն քաղաքական-բարոյական դրության մեջ յեղած այնպիսի բացասական յերևույթների մասին, վոր առաջ են գալիս կարգապահական պրակտիկայի ծռվածքների հիման վրա. խեղաթյուրումների ու ծռվածքների վերացման գործում հրամանատարությանն առաջարկած գործնական ցանկությունների մշակում. կուսակցական կազմակերպությունների ավելի ժամանակին արձագանքումը կուսակցական պետկազմի կողմից խեղաթյուրման փաստերին):

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Նախապատրաստական աշխատանքն ու վերընտրությունները պետք է կատարվեն, սերտ կապ հաստատելով տեղական, խորհրդային, կուսակցական կազմակերպությունների հետ։ Անհրաժեշտ է աշխատանքը համաձայնեցնել կամպանիայի ժամկետներին ու պլանին։*

*Զորամասերի հիմնական խնդիրներն են. 1) բացատրել կարմիր բանակայիններին վերընտրությունների առաջիկա կամպանիայի մասին (նյութը կա մամուլում)։ 2) Նորեկների ծանոթացումը տեղական խորհրդային մարմինների աշխատանքին նախապատրաստության կարգով և հաշվետու ժողովներում։ 3) Հեղինակավոր, տոկուն կարմիր բանակայինների ու պետկազմի առաջքաշումը, վորպես խորհրդի անդամ։ Քաղմարմիններն ու կուսկազմակերպությունները պետք է ապահովեն անկուսակցական ակտիվի ընտրությունները՝ խորհուրդների կազմի մեջ։*

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

*Առաջիկա խաղերի ու պարապմունքների համար մանրամասն դիրեկտիվ կուղարկվի լրացուցիչ կերպով, յերբ կստացվեն ՊՈՒՌ–ի ղեկավարող ցուցումները։*

*Քաղկազմի ռազմական պատրաստության ասպարեզում նկատվում է վորոշ հետամնացություն ՊՈՒՌ–ի և բանակի ՀՌԽ գոյություն ունեցած հրամանների կատարման մեջ։ Առաջիկա շրջանում անհրաժեշտ է ստուգել այդ աշխատանքի ընթացքը և վորոշել հաստատուն ժամկետներ ռազմական պարապմունքների սահմանված ծրագրերը քաղկազմի կողմից ավարտելու համար։ Միևնույն ժամանակ ամեն կերպ ոգնություն ցույց տա–*

լով քաղկոմին տեսական դասընթացն անցնելու մեջ, հարկավոր է ավելի լայն չափով գործադրել քաղաշխատողների մասնակցությունը շրջային պարապմունքների անցկացնելուն, հրամատարական պարտականություններ կատարել տալով նրանց. Հարկավոր է նույնպես զորամասից ժամանակավորապես հեռացող հրամատարներին փոխարինել ամենից պատրաստված քաղաշխատողներով:

Զորամասերի քաղմարմիններն ու քաղապարատները պետք է լուրջ ուշադրություն նվիրեն այն խմբակների աշխատանքների ծավալման, որոնց շրջային կուսակցականները, և մանավանդ 1906 թվի ծնված նորեկներն ուսումնասիրում են կուսակցական կազմակերպության՝ պատերազմի ժամանակվա աշխատանքների հարցերը:

## ԿՈՒՍՔԱՂԼՈՒՍ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ ԶՄՐԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Կուսկազմակերպություններն ու քաղմարմինները պետք է ձգտեն ռեյալ արդյունքներ ստանալու ամբողջ կուսքաղաշխատանքի ռացիոնալացման ասպարեզում, ունենալով հետևյալ հիմնական խնդիրները. ա) աշխատանքին ցույց տված ղեկավարություն, ինչպես նաև բուն աշխատանքի որակի բարելավումը, նրա և՛ ավելի արդյունավետության տեսակետից. բ) կուսակցականների ու կոմյերիտականների, և մանավանդ կուսակցական պետկազմի բեռնավորման վճռական նվազեցումը, հանգստի և ինքնապատրաստման համար ժամանակի մինիմումի ապահովումը:

Պետք է ուժեղացնել քաղմարմինների ու կուսկազմակերպությունների դերն ու հրամատարությանը ցույց տված օգնությունը շրջային-վարժական և զորամասի կուլտուր կենցաղային կյանքի ռացիոնալացման գործում:

Պետք է վերացվեն պետկազմի անուշադիր վերաբերմունքի դեպքերը դեպի իրենց ստորադրյալների հանդիստն ու առողջությունը (ձգումներ, ժամանակի անբավարար կանոնավորում, վորի հետևանքով աշխատում են հանգստյան օրերին, հիվանդության պատճառով սահմանված արձակուրդների մերժում, չնայած ռազմա-բժշկական հանձնաժողովների վորոշմանը և այլն):

Հավելված՝ գործնական ցուցումներ ռացիոնալացման վերաբերյալ և ժողովների, խորհրդակցությունների մոտավոր կազմորոշիչներ և այլն:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Անհրաժեշտ է.

ա) տնտեսական աջակցող հանձնաժողովների և վաշտային լիազորների հերթական վերընտրությունների ժամանակ ապահովել նրանց իսկական աշխատունակ կազմը (դրա համար պետք է նախապես խնամքով քննարկել թեկնածությունները կուսակցական բյուրոների նիստերում, վաշտային կոմբջիջների ժողովներում.

բ) բարելավել տնտեսական աջակցող հանձնաժողովների աշխատանքին ցույց տված ղեկավարությունը. դրա համար կայազորային մասշտաբով հրավիրել քաղբաժիններին կից՝ տնտեսական ժողովների յեռամսյակային խորհրդակցություններ, դնելով այդ խորհրդակցություններում ռազմա-տնտեսական մատակարարման պետերի ինֆորմացիան՝ զորամասերի տնտեսական դրության մասին, տնտեսհանձնաժողովների զեկուցումներ՝ առանձին զորամասերի աշխատանքի մասին, մշակելով գործնական առաջարկներ տնտեսհանձ-

նաժողովների աշխատանքի մասին՝ հերթական ժամանակամիջոցի համար:

գ) Ժողովներում տնտեսական հարցերի վերաբերյալ զեկուցումների հետ միասին դնել տնտեսհանձնաժողովների և վաշտային լիազորների հարցազեկուցումները. տնտեսահանձնաժողովների հատուկ հաշվետվությունններն իրենց աշխատանքի մասին դնել զորամասերի ընդհանուր ժողովներում 6 ամսվա մեջ առնվազն 2 անգամ:

դ) Լայն չափով գործադրել տնտեսհանձնաժողովների նիստերում զորամասերի տնտեսական աշխատողների զեկուցումների ունկնդրումը:

ե) Տնտեսհանձնաժողովների աշխատանքին տալ ավելի մեծ չափով հասարակայնություն. դրա համար կազմակերպել տնտեսհանձնաժողովների դռնբաց նիստեր վաշտի լիազորների մասնակցությամբ, ակումբներում ու լենինկյուններում. կազմակերպել կարմիր բանակայիններից ու պետկազմից դիմումների, գործնական առաջարկների ընդունելություն և այլն, ժամանակին իրազեկել այդ դիմումների և առաջարկների առթիվ ձեռք առած միջոցների մասին:

զ) Զորամասերի ռազմկոմները պետք է ապահովեն տնտես-հանձնաժողովների արած բոլոր նպատակահարմար առաջարկների իրական կիրառումը տնտեսական ապարատի կողմից:

ԲԳԿԲ Քաղվարչությունը նշել է առաջիկա ձմրան շրջանում զորանոցների տես (սմոտր) անցկացնել (կոնկրետ ցուցումները կտրվեն լրացուցիչ կերպով): Այդ տեսի բաղադրիչ մասը պետք է հանդիսանա տնտեսհանձնաժողովի աշխատանքի ստուգումը, ուշադրությունը դեպի նրանց: Զորամասերի քաղպարատներն ու կուսկազմակերպությունները պետք է ապահովեն կարմիր բանակայինների ու պետկազմի լայն մասնակցությունն այդ կամպանիային:

## ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

*Ձմրան շրջանի համար այդ բնագավառում հիմնական խնդիրներն են․*

1․ 1906 թվի նորեկների կոոպերացումը, *ռազմական կոոպերացիայի դերի բացատրությունը ճամբարում, մանյովրաներում և ընկերության մեջ քաշելը:*

2․ Հաշվետու վերընտրական կամպանիա: *Այստեղ մտնում են խանութհանձնաժողովների ցուցադրական բաժանմունքների վարչությունների հաշվետվություններն ու վերընտրությունները, լիազորների ժողովները, լիազորների հաշվետվություններն ու նորերի ընտրությունները: Ամբողջ կամպանիան պետք է տարվի ինքնաքննադատության լոզունգով։*

## ԱԳԻՏԱՑԻՈՆ—ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

*Ագիտացիոն—պրոպագանդիստական աշխատանքի հիմնական խնդիրներն ամբողջովին բղխում են ծրագրային շրջանի դիրեկտիվի առաջադրած ընդհանուր խնդիրներից: Այդ խնդիրների հաջող լուծումը հնարավոր է միայն այն պայմանով, յերբ խնամքով կուսումնասիրվեն բջիջների քարտուղարների 2-րդ խորհրդակցության վորոշումներն ագիտ—պրոպ հարցերի առթիվ, ագիտ—պրոպ հարցերի վերաբերյալ համամիութենական խորհրդակցության վորոշումները և շրջանային քաղվարչությունների ագիտ—պրոպբաժինների խորհրդակցության վորոշումները (հրամանների ժողովածու* № 12—*հոկտ․* 1-*ից*):

*Առանձնապես չեշտվում է առաջիկա աշխատանքում յերեք խոշորագույն մոմենտ․* 1) *զորամասի ուսուցման ու կենցաղի բոլոր կողմերի ընդգրկումն ագիտ—պրոպաշխատանքով․* 2) *պայքար ագիտ—պրոպաշխատանքի*

բոլոր տեսակների, իդեյական ու մեթոդական առկունության համար, այստեղից է՝ վերադաս աշխատողների իրական առօրյա օգնության անհրաժեշտությունը թե՛ արտադպրոցական ագիտացիայի ու պրոպագանդայի և թե դպրոցական գծով, ինչպես նաև վերահսկողություն և աշխատանքի ճշտում. 3) աշխատանքի առանձին ճյուղերում ձեռք բերած հաջողությունների հաստատուն ամրացման անհրաժեշտությունը:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. Կուսակցական լուսավորության հերթական խնդիրները հիմնականում վորոշված են Համ. Կկ. (բ) բջիջների քարտուղարների համարանակային 2-րդ խորհրդակցության վորոշումներով:

2. Կուսկազմակերպությունները պետք է ապահովեն ծրագրերի համաձայնեցումը Կոմինտերնի 6-րդ կոնգրեսի, Համ. Կկ.(բ) 15-րդ համագումարի վորոշումների ու կուսակցության հերթական խնդիրների հետ, ձգտելով, վոր ավելի մեծ չափով տեսականորեն հիմնավորվեն անցնելիք հարցերը, և շարունակեն բարձրանալ պարապմունքների առույգությունն ու դաստիարակչական արժեքը:

3. Զգալի փորձառության գոյությունը կուսլուսի պարտադիր ձևերի գծով միանգամայն լրիվ հնարավորություն է տալիս խուսափելու զանազան կազմակերպչական ու մեթոդական թերություններից, վորոնք վորոշ չափով կայունացել են վերջերս (ունկնդիրների ինքնապատրաստման անկանոնությունը, ղեկավարների ունականների կադրի փոքր չափով ոգտագործումը, անկուսակցականների փոքր տոկոսը, պարապողների ակտիվության ճնշումը):

4. Ինքնազարգացման դրվածքը 1927–28 թվին թե՛ կուսակցական լուսավորության գծով և թե՛ ընդհանրապես պետկազմի հետ չափազանց թույլ էր։ Անհրաժեշտ է՝ ամենայեռանդուն կերպով ապահովել այդ աշխատանքի լայն ծավալումն ամենից առաջ կուսլուսի բնագավառում։ Իրացնել ԿԿԲ ՔՎ համապատասխան դիրեկտիվներն ու ԿԿԲ ՔՎ 1927 թվի դեկտեմբերի 28-ի № 446 ցուցումները, ձգտելով ընդգրկել անհատական ու խմբակային ճկուն ձևերով առավելագույն քանակությամբ անձանց։

5. ԿԿԲ ՔՎ նշում է, որ ինքնազարգացման աշխատանքի հաջողությունը յերաշխավորող հիմնական պայմաններն են հանդիսանում. կուսկազմակերպության ղեկավարությունը, ինքնազարգացման կազմակերպիչների ու խորհրդածուների մշտական փորձված կադրի գոյությունը. պարապողներին ձեռնարկներով ու հատուկ ամսագրերով ապահովումը (վո՛չ ԿԿԲ ՔՎ և վո՛չ ԿԲՏ վոչ մի հանձնարարություն չեն կազմելու). պարապողների իսկական ազատ ժամանակի ապահովումը. ինքնազարգացումը ղեկավարող քաղաքացիական կազմակերպությունների հետ կապը. խորհրդածուների հետ հրահանգչական խորհրդակցությունները։

6. Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն նվիրել կայազորային յերեկոյան դասընթացների ու խմբակների աշխատանքների կարգավորման և զորամասերի քաղաշխատանքի կաբինետներին՝ ու ԿԲՏ կից յեղած խորհրդածու կայանների սիստեմատիկ աշխատանքին։

## ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

1. Անցյալ տարվա՝ քաղպարապմունքների վորակի բարելավման համար մղած պայքարը բավարար ար-

*դյունքներ չավեց։ Առաջվա պես դեռ մնում են քաղպարապմունքների այն թերությունները, որ մատնանշված են ՊՈՒՌ-ի Պետի ս/թ. փետրվ. 15-ի № 63821 շրջաբերականում։ Ուստի շրջաբերականում մատնանըշված այդ թերությունների դեմ պայքարի միջոցները պետք է օգտագործվեն առաջիկա աշխատանքում։ Խմբակավարների ընտրությանն ու նրանց պարապմունքների համար պատրաստությանը պետք է նվիրել բացառիկ ուշադրություն։ Անհրաժեշտ է ավելի մեծ չափով, քան առաջ, խմբակավարի մեջ դաստիարակել գիտակցություն կարմիր բանակայինների հետ տարվող քաղպարապմունքների որակի համար, ճիշտ այնպես, ինչպես շարային պարապմունքների համար։ Միևնույն ժամանակ պետք է գործադրվեն բոլոր միջոցները լավ հիմքերի վրա դնելու հրահանգավորումը և քաղպարապմունքների օրինակելի անցկացման ցուցադրությունը։*

*Կանոնավոր պարապմունքների առաջին ամսվա ընթացքում քաղմարմինների, քաղապարատի ու կուսակցական կազմակերպության ուժերով կատարել քաղպարապմունքների դրվածքի ստուգում և ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները, որ բղխում են պարապմունքների այդ ճյուղի վիճակից, չսպասելով տարեկան ու կիսամյակային արդյունքներին։*

*2. Քաղղեկավարները հրահանգավորման ու մշտական ղեկավարման կարգով պետք է մանավորապես գործնական առօրյա օգնություն ցույց տան խմբակավարներին թերթեր կարդալու և թերթերի նյութերը պարպմունքներում օգտագործելու մեջ։*

*Հատուկ ուշադրություն պետք է նվիրել համալըրման վայրերի նյութերի օգտագործմանը մեր նվաճումների ու խնդիրների լուսաբանման համար։*

*3. Քաղղեկի, որպես հրահանգչի, աշխատանքի հարցը պետք է ձմրան շրջանում դրված լինի իր ամ-*

բողջ սրությամբ: Վոչ մի կերպ չպետք է հանդուրժել քաղբեկի բացակայությունը քաղպարապմունքներից: Յուրաքանչյուր խմբակավարի պատրաստության համար լիակատար պատասխանատվության սկզբունքը պետք է կիրառվի ամբողջ խստությամբ: Այդ առթիվ պետք է հաստատապես դրված լինի քաղբեկների հետ տարվող ռազմկոմի աշխատանքը, նրանց հրահանգչական վորակը բարձրացնելու գծով:

4. Ակնհայտ է հրամատարության, քաղապարատի ու կուսկազմակերպությունների ուշադրության թուլացումը դեպի անգրագիտության վերացումը: Անհրաժեշտ է ուժեղացնել աշխատանքի այդ ճյուղը: Պետերի կազմի, կուսակցական ու կոմյերիտական կազմակերպության, ինչպես նաև զորամասի ամբողջ կազմի հասարակական կարծիքը պետք է կենտրոնացած լինի անգրագիտության ու կիսագրագիտության հարցի շուրջը, վորպես կուլտուրական հեղափոխության ճակատում կարևորագույն խնդիրների:

Բացի անգրագետների խմբակներում անգրագիտության վերացման պարապմունքների որինակելի կարգավորման, հարկավոր է պարապմունքներ ունենալ անգրագետների ու կիսագրագետների հետ յերեկոյան դպրոցներում. Հարկավոր է նույնպես գործադրել առանձին հետամնաց ընկերին անգրագիտության և կիսագրագիտության վերացնողների կցումները «Կանը» աշխատանքի կարգով:

Ցերկրային զորամասերի աշխատանքում իրացնել ԽՍՀՄ 1928 թվի հունիսի 9-ի № 78 հրամանը:

## ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԸ

Հակակրոնական պրոպագանդի բնագավառում հիմնական խնդիրը հարկավոր է դնել վոչ թե կրոնի հարձակումից պասսիվ պաշտպանությունը, այլ ակտիվ հարձակումը կրոնի դեմ, վորպես կուլտուրական հե-

ղափոխության և այդպիսով իսկ սոցիալիստական շինարարության զարգացման գործում խոշորագույն խոչընդոտի դեմ: Դրա համար հարկավոր ե լուծել հետևյալ խնդիրները·

1· Անհրաժեշտ ե «ձգտել, վոր լինի վճռական բեկում հակակրոնական պրոպագանդը համակուսակցական առորյա աշխատանքի մեջ մտցնելու գործում: Անաստվածների միության աշխատանքի համար ջոկել մասսայական աշխատանքում սնուցված, տեսականապես պատրաստված կուսակցականներին, հաշվելով Անաստվածների Միության մեջ տարած աշխատանքը կուսակցական բեռնավորում» (ՀամԿԿԿ(բ) Ագիտպրոպ բաժնի բանաձևից):

2· Անաստվածների միության բջիջներ պետք ե կազմակերպվեն բոլոր գործարաններում: Ավելի լայն չափով գրավել Անաստվածների Միության բջիջների մեջ կարմիր բանակայիններին ու պետկազմի ակտիվին: Ավելի մեծ չափով ոգտագործել մասսայական աշխատանքի ձևերը:

3· Մասսավիկ—հակակրոնականների նոր կադրեր պատրաստելու համար ըստ կայազորների անցկացնել հակակրոնականների դասընթացներ:

4· Սիստեմատիկաբար լրացնել գրադարանները հակակրոնական գրականությամբ:

Ծրագրերն ու մեթոդական ցուցումները կտրվեն առանձին փաստաթղթով:

## ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԲԳԿԲ արտադպրոցական աշխատանքի վերաբերյալ 1927 թվի Համամիութենական խորհրդակցության վորոշումներն առաջվա պես մնում են, վորպես արտադպրոցական աշխատանքի առանձին ձևերի դրվածքը վորոշող կարևորագույն փաստաթուղթ:

*Արտադպրոցական աշխատանքի բնագավառում զորամասերի առաջ ծառացած բազմաթիվ խնդիրներից ԿԿԲ Քաղվարչությունը, որպես հիմնական խնդիրներ առանձնացնում է հետևյալը·*

### ա) Լենանկյունների խորհուրդների և ակումբների վարչությունների աշխատանքը

*Հիմնական խնդիրն այստեղ այդ կազմակերպությունների ակտիվացումն է, մշտական ղեկավարող աշխատանքի մեջ քաշելով, ուժեղացնելով կուսակցական ղեկավարությունը և մանավանդ ռազմկոմների, ակումբի պետի ու քաղղեկների խելամիտ, զուսպ ղեկավարության և օգնության միջոցով:*

### բ) Գեղարվեստական աշխատանքի ուժեղացումն ու բարելավումը

*Լենանկյունների և ակումբների աշխատանքի անկենդանությունն ու չորությունը զգալիորեն բացատրվում է նրանով, որ չեն գործադրվում ագիտացիայի ու պրոպագանդի գեղարվեստական ձևեր: Ուստի գեղարվեստական (մանավանդ մասսայական) աշխատանքի զարգացմանը պետք է հատուկ ուշադրություն նվիրել: Մանավորապես անհրաժեշտ է.*

1. *Ամեն կերպ խրախուսել և առաջ քաշել կարմիրբանակայինների գեղարվեստական ընդունակությունները (գարմոնիստներ, բալալայկա նվագողներ, երգիչներ, պատմողներ և այլն).* 2. *գեղարվեստական աշխատանքի փորձառության և ուժերի փոխանակություն կատարել զորամասերի միջև, ձգտել այնպես անել, որ ցուցադրական ագիտացիայում լինի գեղարվեստ և արտահայտություն.* 3. *օգտագործել Գեղաշխի միության ուժերը թե՛ բեմադրությունների և թե՛ գեղարվեստական աշխատանքի ղեկավարության համար.* 4. *ռացիո-*

նալ ձևով օգտագործել ռադիոն և կինոյի շուրջը ծավալել ակտիվ աշխատանք:

Այս ամբողջ աշխատանքում ապահովել սուր բովանդակություն, համապատասխան վերահսկողություն և յելույթների համար նյութերի ընտրությամբ, մանավանդ, գեղարվեստական խմբակների աշխատանքների մշտական ղեկավարության միջոցով:

դ) Ապահովել խմբակների սիստեմատիկ աշխատանքը:

Ամենալուրջ պահանջներ պետք է առաջադրել դեպի ակմբի խմբակային աշխատանքը: Մինչդեռ հատկապես հենց այդ աշխատանքն է հաճախ ամենից անկանոնը, միայն թղթի վրա գոյություն ունեցողը: Ձմրան շրջանի համար առաջադրվող հիմնական պահանջն է՝ կանոնավորել աշխատանքն այդ ասպարեզում, համաձայնեցնել աշխատանքը զորամասի իրական պահանջների ու հնարավորությունների հետ: Աշխատանքի հաջողության համար տարրական պայմանները կլինեն. 1) ղեկավարների հրահանգավորումը. խմբակային աշխատանքում ղեկավարությունը ինքնագործնեյության հետ ճիշտ զուգակցելու սովորքներ պատվաստելու գծով. 2) խմբակային աշխատանքի նյութական ապահովումը շենքով, ձեռնարկով, ժամանակով ու կահավորանքով. 3) խմբակներում լայն ինքնավարություն. 4) փորձի լայն փոխանակության կազմակերպում զորամասի խմբակների միջև. 5) կուսակցականների և կոմյերիտականների մասնակցությունը և կուսկազմակերպության մշտական ղեկավարությունը. 6) աշխատանքի համաձայնեցումը հասարակական կազմակերպությունների հետ (Անաստվածների միություն, ՊԱՁԸ—Ավիաքիմ, Կորչի Անգրագիտությունն Ընկերությունը):

դ) Տեղեկատու աշխատանքի կանոնավորումը:

*Տեղեկատու աշխատանքի բարելավմանը պետք է հասնել հետևյալ միջոցներով. 1) համաձայնեցնել տեղեկատու աշխատանքը ակումբներում և լենանկյուններում. նպատակահարմար ձևով բաշխել տեղեկատու նյութերը, ակմբի աշխատանքների կողմից հրահանգավորել խորհուրդների այն անդամներին, վորոնք վարում են խորհրդատու աշխատանքն անկյուններում: 2) Սահմանել վաշտի հրամատարի ու քաղղեկի իրական պատասխանատվություն հարց ու պատասխանների տետրերը վարելու համար: 3) Սերտ կապ հաստատել դատախազության հետ կազմակերպելու և տանելու համար տեղեկատու իրավաբանական աշխատանքը: 4) Օգտագործել մամուլը և մասսայական աշխատանքի գեղարվեստական ձևերը, ինչպես նաև լավագույն ձևով օգտագործել ցուցադրական ագիտացիան:*

ե) Ուշադրություն գրադարանին:

*Միայն բացառիկ և չթուլացող ուշադրությունը դեպի գրադարանային գործը կուսքաղլուսպարատի բոլոր օղակների ու հրամկազմի կողմից կապահովի գրադարանային աշխատանքի պատշաճ զարգացումը, վորը մինչև այժմ մեր աշխատանքի աչքաթող արված տեղամասն է և թույլ է կապված ընդհանուր աշխատանքի հետ: Գրադարանների մեջ ամբողջ պետկազմի և ամբողջ կուսակցական ու կոմյերիտական մասսայի կարմիր բանակային լայն ակտիվի ներգրավումը. ընթերցողների ակտիվ ստեղծելն ու օգտագործելը. գրադարանների ժամանակին համալրումը. քաղղեկների իրական պատասխանատվություն ստեղծելը՝ դեպի գիրքը կարմիր բանակայինների ունեցած պահանջների հաշվառման համար, ստորաբաժանումների շարժական գրադարանների դրության համար—այս բոլորը կնպաստեն այդ աշխատանքի շտկմանը:*

դ) Կարգ ու կանոն ու մաքրություն ակումբներում ու լենանկյուններում

Այժմյան նյութական պայմանները հնարավորություն են տալիս բոլոր աշխատողների ջանքերով զգալի արդյունքներ ստանալու՝ այն վայրերի հարմարության ու մաքրության գործում, վորտեղ ընթանում ե արտադպրոցական աշխատանքը:

## ՍԱՆ ԼՈՒՍ ԱՇԽԱՏԱՆՔ

ԿԿԲ ՔՎ առաջարկում ե զորամասերի կուսակցական կազմակերպություններին ու քաղապարատին հետևյալ գործնական խնդիրները, վորոնց լուծումը կնպաստի սանլուս աշխատանքի թերությունների վերացմանը·

ա) ունենալ կյանքում կիրառելու բժշկական աշխատողների բանակային կոնֆերանսի վորոշումները·

բ) ներգրավել բժշկական աշխատողներին մեթոդական պարապմունքներին դպրոցական և արտադպրոցական գծով.

գ) ոգտագործել բժշկական ուժերը հանրակրթական աշխատանքի և հակակրոնական պրոպագանդի համար·

դ) բժշկական աշխատողներին մասնակից դարձնել արտադպրոցական աշխատանքներին մանավանդ սպորտի գծով.

ե) բժշկին մասնակից դարձնել գրականություն դուրս գրելու գործին:

## ԳԵՂԱՑԽԻ ՈՒ ԼՈՒՍԱՑԽԻ ՇԵՖՈՒԹՅՈՒՆԸ

Գետկայմի ինքնազարգացման աշխատանքը, հանրակրթական աշխատանքը կարմիր բանակայինների հետ և պահանջների ուժեղացումը դեպի մասսայական աշխատանքը, առաջ քաշեցին բանակում մեր չեֆերի,—

լուսաշխի ու գեղաշխի,—գործունեության իրական աշխուժացման խնդիրը:

Բանակի զորամասերը պետք է սիստեմատիկ կապ հաստատեն տեղական արհեստակցական մարմինների հետ՝ չեֆ միությունների ուժերի պլանային օգտագործման համար:

## ԶԻՆԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մամուլի ամենալայն օգտագործումն ինքնաքննադատության ծավալման գործում խնդիր է առաջադրում ուժեղացնել զինթղթակցային աշխատանքին ցույց տված կուսակցական առողջ ղեկավարությունը և բարելավել զինթղթակիցների հետ տարվող դաստիարակչական աշխատանքը:

Բանգյուղթղթակիցների համամիութենական խորհրդակցության և մանավանդ զինթղթակցային սեկցիայի վորոշումները պետք է ամրացվեն և խնամքով մշակվեն բոլոր զինթղթակիցների կողմից:

## ՔԱՂԼՈՒՍՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հիմնական խնդիրն է հանդիսանում ԽՍՀՄ ՀՌԽ նախագահի այն դիրեկտիվի իրացումը, վոր վերաբերում է լենինկյուններում և ակմբային շենքերում հարմարության ստեղծելուն, նրանց վոչ թե սովորական նորմաների այլ իրական պահանջների չափով տաքացնելուն և լուսավորելուն:

Մատակարարմանը վերաբերող այլ հարցերից ԿԿԲ ՖՎ առաջադրում է հետևյալը. անհրաժեշտ է ձեռք բերել ցուցակներով սահմանված գույք, հսկել քաղլուսգույքի պահպանմանը, գումարներն օգտագործել, հաշվի առնելով քաղլուսաշխատանքի բոլոր ճյուղերի կարիքները, կռվել ավելորդ ծախքերի դեմ:

## ՔԱՂԼՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԲԻՆԵՏՆԵՐ

Ագիտ պրոպաշխատանքի բոլոր հիմնական ձևերի պատշաճ անցկացումը զգալի չափով դեմ և առնում քաղլուսաշխատանքի կաբինետների ակտիվ աշխատանքի բացակայության:

Անհրաժեշտ և ձգտել այնպես անել, որ կաբինետն անպատճառ դառնա հիմնական բազա ագիտպրոպաշխատանքի համար և միևնույն ժամանակ կենտրոնացնի այդ աշխատանքի կենդանի փորձը:

## ԿԲՏ

Կարմիր Բանակի ու Նավատորմի Տներին առաջադրվում են հետևյալ խնդիրները. ստեղծել իր ամուր ակտիվը, որն ազդի Տան կյանքի ամբողջ ընթացքի վրա. ծավալել մասսայական գեղարվեստական աշխատանք ԿԲՏ անդամների ուժերով և միևնույն ժամանակ օգտագործել դրսի լավագույն ուժերը. զարգացնել ռազմա-գիտական ու մասսայական ռազմական աշխատանք. իրական կապ հաստատել քաղաքացիական կազմակերպությունների հետ, մանավանդ ռազմական աշխատանքի գծով:

## ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՏԵՍԵՐ

Ձմրան շրջանում բանակային ու դիվիզիական թերթերը պետք և անցկացնեն լայն հասարակական տեսեր (սմոտրներ)—1) կարմիր վրանոցի, 2) պրոլետարական կազմակերպությունների հետ ունեցած բանակի կապի, 3) Անաստվածների միության բջիջների տեսեր:

Հավելվածներ. 1) Վերընտրությունների, սեմինարների և կամպանիաներ անցկացնելու ժամկետները: 2) Գործնական ցուցումներ ռացիոնալացման վերաբերյալ: 3) Որինակելի կողմորոշ (որինակը) ժողովների և խորհրդակցությունների՝ գնում: 4) Քաղվարչի հերջաբերականը կրտսեր պետերի կազմի մասին: 5) Անցյալ շրջանի դիրեկտիվների ցանկը:

կկ. Բ. Քաղվարչության պետ՝

ՎԱՍԻԼՅԵՎ

ՀԱՎԵԼՎԱԾ № 1

# ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍԵՄԻՆԱՐՆԵՐ ՅԵՎ ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

| | |
|---|---|
| 1. *Վերընտրություններ կուսկազմակերպություններում* . . . . | *նոյեմբեր* |
| 2. *Խմբակավարների և քաղգեկների սեմինարներ* . . . . . . . | *նոյեմբեր.* |
| 3. *Վերընտրություններ կոմյերիտական կազմակերպություններում* . . . . . . . . . . . . . . | *դեկտ.* I *կեսում.* |
| 4. *Վաշտային պրոպագանդիստների սեմինարներ* . . . . . . . | *դեկտեմբեր.* |
| 5. *Ստորին հակակրոնականների սեմինարներ* . . . . . . . . . | *դեկտեմբեր.* |
| 6. *Լենանկյունների խորհուրդների և ակումբների վարչությունների վերընտրություններ* . . . | *դեկտեմբերի* II *կեսում* |
| 7. *Աջակցության տնտեսական հանձնաժողովների վերընտրություններ* . . . . . . . . . . . | |
| 8. *Խմբկոմների վերընտրություններ* . . . . . . . . . . . . . | *հունվարի* I *կեսում.* |
| 9. *Կրպակների հանձնաժողովների վերընտրություններ* . . . . . | |
| 10. *Վերընտրություններ հասարակական ինքնագործունեության կազմակերպություններում* . . | |

11. *Բջիջների քարտուղարների սեմինարներ* . . . . . . . . . . . *դեկտ.—հունվ.*
12. *Կոմյերիտմիության պատասխանատու կազմակերպիչների սեմինարներ* . . . . . . . . . . *դեկտ.—հունվ.*
13. *Խմբկոլների անդամների սեմինարներ* . . . . . . . . . . . . . *հունվար.*
14. *«Զակվոյենպոյի» լիազորների ռայոնական ժողովներ* . . . . *հունվար.*
15. *Զորանոցի գննության կամպանիա* . . . . . . . . . . . . . . .
16. *Պրոլետարական կազմակերպությունների հետ ունեցած կապի գննության կամպանիա* . . .

} *հունվ. փետրվ.* (15–16)

17. *Խորհուրդների վերընտրություններին մասնակցելը* . . *փետրվար.*
18. *«Զակվոյենպոմի» լիազորների համագումար* . . . . . . . . . . *փետրվար.*
19. *Անաստվածների միության բջիջների աշխատանքների զըննություն, ապա անաստվածների կայազորական կոնֆերանսներ* . . . . . . . . . . . . . . . *փետրվ.—մարտ.*
20. *Զինթղթակիցների կայազորական կոնֆերանսներ* . . . . . *փետրվ.—մարտ.*
21. *Ինքնուսների և կուսդպրոցների ունկնդիրների կոնֆերանսներ* *ապրիլ.*

| | |
|---|---|
| 22. *Կարմիր բանակային կոնֆերանսներ (խորհուրդների համամիութենական համագումարից հետո)* . . . . . . . . . . | *մայիսի I կիսին.* |
| 23. *Դիվիզիական կոմյերիտմիութենական կոնֆերանսներ* . . . . | *Ժամկետները կը սահմանվեն լրացուցիչ կերպով.* |
| 24. *Դիվիզիական կուսակցական կոնֆերանսներ* . . . . . . . . | |

ՀԱՎԵԼՎԱԾ № 2

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՌԱՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱՆ ՔԱՂՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ

### 1. ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

*ա) Հանձնարարված աշխատանքի իր ժամանակին կատարելու* անհատական պատասխանատվության ուժեղացումը, *նույնպես և ուժեղացում դիրեկտիվների և վերադաս մարմինների պահանջների. դրա իրական սիստեմատիկ ստուգման կազմակերպումը, վոր պետք ապահովի անվերջ իրար չհասկանալու ու միևնույն հարցի վերաբերյալ կրկնվող ցուցումների լիկվիդացիան (տես Քաղվարչի Հրաման № 38/4 հուլիսի 18-ին 1928 թ.):*

*բ)* Յերկշաբաթյա կատարելապես կոնկրետ աշխատանքի ծրագիր, *վորոնք պետք ապահովեն ամեն մի աշխատողին վորպես որինակելի կողմորոշ (որիենտիր) նրա կողմից տարվող պարապմունքների համար. ճշտորեն նշում նախատեսվող խորհրդակցությունների և ժողովների, դրա մեջ հաշվելով և քաղմարմնից դուրս ներկայացուցչությունը:*

*գ)* Ֆունկցիաների ճշտորեն բաշխում *աշխատողների միջև, թույլ չտալով զուգահեռ անցկացնելու քաղմարմնի (քաղորգանի) զորամասերի աշխատանքի մեջ:*

### 2. ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

*ա) Հիմնական գծի ավելի հաստատ կիրառումը*—դա կենդանի ղեկավարությունն ե; տեղերում աշխատողներին անմիջական *ոգնություն հասցնելը՝ նրանց աշխա-*

*տանքի պակաս կողմերը վերացնելու գործում, հսկողությունն ու աշխատանքի ստուգումը (տես Քաղվարչի ցուցումը* № II *(ռուսերեն «Գ»)* 1/92579 ¼ *սեպտ.* 1928 *թ.)*:

*բ)* ԿԿԲ Քաղվարչության պլանը քաղմարմինների կողմից լրացնելու ժամկետների միատեսակություն. *առաջին լրացում—մինչև Հայկուսկոնֆերենցիան, յերկրորդը—Հայկուսկոնֆերենցիայից հետո մինչև ձմեռնային ժամանակաշրջանի վերջը. մաքսիմալ չափով սեղմ լրացումներ, նրանց մեջ առնելով միայն այն մոմենտները, վորոնք հատուկ են տվյալ ժամանակաշրջանի համար. լրացուցիչ դիրեկտիվներ տալ միայն բացառիկ դեպքերում*:

*գ)* Կողմորոշ պլաններ տալը զորամասերին, *ցույց տալով նախատեսվող դիվիզիական խորհրդակցությունների ժամկետները, զեկուցելու համար Քաղբաժին կանչելը (զեկուցումներին անպայման նախորդում են հետազոտությունները), հրահանգչական շրջագայություններ, կայազորական խորհրդակցություններ*:

*դ)* Ղեկավարության, շրջագայությունների, դիրեկտիվների և այլն համաձայնեցում *դիվիզիաների շտաբների հետ (իր ժամանակին հրատարակություն, հրատարակության միաժամանակություն միևնույն հարցի վերաբերյալ և լիակատար համաձայնեցում զորամասերից լրացուցիչ կերպով հարցումներ անելուց խուսափելու համար): Վոչ մի դեպքում թույլ չտալ անհամաձայն, իրար հաջորդող ինսպեկցիաներ*:

## ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱՆ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ

1. Ղեկավարության գծով. *սկզբնական կազմակերպությունների ղեկավարության հիմքը—դա կոնկրետ հրահանգումն է, օգնությունը, աշխատանքի արդյունքների ստուգումը: Կուսբյուրոն չպետք է պահանջի բջիջներից վոչ մի գրավոր մատերիալ և վոչ մի մատերիալ չպիտի տա (այս չի վերաբերում յերկրային զորա-*

*մասերին՝ հավաքներից զատ)․ Ընկերների արձանագրությունների հետ պետք է ծանոթանան կուսբյուրոները պատասխանատու քարտուղարները՝ կենդանի ղեկավարման կարգով: Կուսբյուրոն պետք է ունենա ամսական ցուցակը բոլոր խորհրդակցությունների և ժողովների, որոնք պիտի տեղի ունենան գնդի մասշտաբով և ընկերների պատասխանատու քարտուղարների ու զանազան կազմակերպությունների կողմից կուսբյուրոյում զեկուցումներ անելու ցուցակ:*

2․ **Պլանների գծով**․ *գնդում պետք է միայն մի պլան լինի, մաքսիմալ չափով սեղմ, որ պիտի իր մեջ ամփոփի աշխատանքի հանգուցային կետերը* ( узловые пункты) *և արտացոլի տվյալ ժամանակաշրջանի* (период) *առանձնահատկությունները (ժամկետներ՝ առաջին պլանը—մինչև Համկուսկոնֆերենցիան, յերկրորդ և յերրորդ պլանը—Համկուսկոնֆերենցիայից հետո մինչև ձմեռնային ժամանակաշրջանի վերջը: Ընկերները, նույնպես և հասարակական զանազան կազմակերպությունները պետք է ունենան միայն յերկշաբաթյա կոնկրետ ծրագրեր* (ра писание)*.*

3․ **Խորհրդակցության և ժողովների գծով**․ *մաքսիմալ չափով կրճատել նրանց թիվը և ժամանակը (ոչ ավելի քան $2\frac{1}{2}$ ժամ): Իր ժամանակին սկսել ժողովները, խնամքով նախօրոք մշակել հարցերը․ զեկուցողների ժամանակը սահմանափակել (ոչ ավելի քան 1 ժամ): Խնամքով բազմակողմանի կերպով մշակել առաջադրած հարցը, այնպես, որ այլևս կարիք չլինի կրկնել կամ քննարկել մյուս կազմակերպություններում: Կուսբյուրոն ազատել մանր հարցերի քննարկումից և այն հարցերի քննարկումից, որոնք ամենալայն հաջողությամբ կարող են քննարկվել հասարակական կազմակերպություններում․ նախօրոք վերամշակել հարցերը կազմ․ և ագիտպրոպ հանձնաժողովներում: Խորհրդակցություններին հրավիրել միայն այն ընկերներին, որոնց ներկայությունը իրոք անհրաժեշտ է:*

4. Ծանրաբեռնության գծով. *վերացնել կուսակցականների ծանրաբեռնությունը. այդ ծանրաբեռնումը համապատասխան բաշխելու տեսակետից, աշխատանքի մեջ գրավել ակտիվի լայն խավերին: Ավելի համարձակ և խոշոր չափով օգտագործել անկուսակցական ակտիվը և կոմյերիտականներին: Իրապես ապահովել պատասխանատու քարտուղարների 2-րդ համարանակային խորհրդակցության վորոշումը յերկու ազատ յերեկոների մասին (բացի հանգստյան օրերից) շաբաթվա մեջ: Բավական համարել գլխավորականի մասնակցությունը մեկ հասարակական կազմակերպության մեջ:*

*Ռացիոնալիզացիայի վերաբերյալ նշված բոլոր միջոցառումները պետք է անցկացվեն կոմիսարների և քաղմարմինների պետերի անձնական պատասխանատվությամբ, վորոնք պարտավոր են սիստեմատիկ կերպով ստուգել նրանց գործադրումը:*

ՀԱՎԵԼՎԱԾ № 3

## ԺՈՂՈՎՆԵՐԻ ՑԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿՈՂՄՈՐՈՇ (ՈՐԻԵՆՏԻՐ) ԳՆԴՈՒՄ

| | |
|---|---|
| *Կուսկոլլեկտիվի ժողով . . . .* | *ամիսը 1 անգամ* |
| *Կուսբյուրոյի նիստ . . . . . .* | » 2 » |
| *Կազմհանձնաժողովի ժողով . .* | » 2 » |
| *Ագիտպրոպհանձնաժողովի նիստ .* | » 2 » |
| *Համկկ (բ) վաշտի բջիջի ժողով .* | » 2 » |
| *Համկկ (բ) վաշտի բջիջի նախագահության նիստ . . . . . . .* | » 2 » |
| *Կոմերիտական կոլլեկտիվի ժողով* | » 1 » |
| *Կոմերիտական կոլլեկտիվի բյուրոյի նիստ . . . . . . . . .* | » 2 » |
| *Կոմերիտմիության վաշտի խմբակի ժողով . . . . . . . . . .* | » 2 » |
| *Կոմերիտմիության վաշտի խմբակի նախագահության նիստ . . .* | » 2 » |
| *Ընդհանուր գնդային ժողով . .* | *2 անգ. ձմեռվա շրջ.* |
| *Պատգամավորական ժողով . . .* | 2 » » » |
| *Գնդի հրամքաղկազմի ժողով . .* | 3 » » » |
| *Հասարակական կազմակերպությունների գնդի նախագահությունների նիստեր . . . .* | *ամիսը 1 անգամ* |
| *Հասարակական կազմակերպությունների անդամների ընդհանուր ժողովներ . . . . .* | *2 ամիսը մեկ անգ.* |

| | |
|---|---|
| Վաշտերի (և սրանց հավասար) ժողովներ . . . . . . . . | ամիսը 1 անգամ |
| Անկուսակցական ակտիվի վաշտա-յին խորհրդակցություններ . . | 2 ըստ կարիքի (միջին հաշվով 2 ամիսը 1 անգ.) |
| Բազմարտիկների խորհրդակցու-թյուն . . . . . . . . . . | 2 անգ. ձմեռվա շրջ. |

## ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿՈՂՄՆՈՐՈՇ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ՈՒ ԲՋԻՋՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԻ ՅԵՎ ԶԱՆԱԶԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ԿՈՒՍԲՅՈՒՐՈՅՈՒՄ ԱՆԵԼԻՔ ԶԵԿՈՒՅՈՒՄ-ՆԵՐ

| | |
|---|---|
| Բջիջների քարտուղարների զեկու-ցումներ . . . . . . . . | Ամեն մի պա-քարտուղար հա-շիվ է տալիս 1 անգամ ձմեռվա շրջանում. |
| Կուսլուսավորության ղեկավարի զե-կուցում . . . . . . . . | 2 անգամ ձմեռվա շրջանում. |
| Զեկուցում արտադպրոցական աշ-խատանքի մասին . . . . . | Նույնպես. |
| Զեկուցում քաղպարապմունքների մասին . . . . . . . . . | Նույնպես. |

| | |
|---|---|
| Հասարակական կազմակերպու-թյունների զեկուցում . . . | յուրաքանչյուր կազմակերպու-թյուն 1 անգամ ձմեռվա շրջ. |
| Զեկուցում կոմյերիտմիության գըն-դի պատասխանատու կազմակեր-պիչի . , . . . . . . . . . | 2 անգամ ձմեռ-վա շրջանում. |

ՀԱՎԵԼՎԱԾ № 4

ԳԱՂՏՆԻ

# ՇՐՋԱՆՆԵՐԻ (округ) ՅԵՎ ՏՈՐՄԻՂՆԵՐԻ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ

ԲԳԿԲ կրտսեր պետերի կազմը քաղաքա-բարոյական վիճակի նկատմամբ ունի մի շարք եական թերություններ, որոնցից ամենագլխավորներն են.

ա) Բանվորական շերտավորման վոչ բավականաչափ լինելը—նրա թվով յետամնացությունը շարքային կազմի բանվորական շերտավորումից: Չափազանց թույլ են գրավում դեպի վնդի դպրոցները գյուղատնտեսական բանվորներին. ունեոր գյուղացիությունից, իսկ յերբեմն և սոցիալապես անհարազատ տարրերից, ներս են սողոսկում բավական թվով խմբակներ:

բ) Կրտսեր հրամկազմի քաղաքական և կուլտուրական մակարդակը շարունակում է մնալ անբավարար, նրա քաղաքական տրամադրությունը, իր հիմքում, շատ քիչ է տարբերվում կարմիր բանակայինների տրամադրություններից:

գ) Կրտսեր հրամկազմը բավարար չափով չի հրահանգված իր հմտությունների մեջ. չի կարողանում կանոնավոր մոտենալ և անցկացնել կ. բանակայինների ուսուցումն ու դաստիարակությունը:

դ) Համեմատաբար բարձր է կրտսեր հրամկազմի կարգապահական զանցանքների տոկոսը, քիչ է տարբերվում կարմիր բանակայինների զանցանքների տոկոսից: Կրտսեր հրամկազմը դեռևս լիակատար չափով կարգապահության օրինակ չի հանդիսանում շարքային կազմի համար:

*ե) Կրտսեր հրամկազմի կարգապահական պրակտիկայում նկատվում են անհանդուրժելի խեղաթյուրումների դեպքեր: Այս հանգամանքը վկայում է, որ կարգապահական պրակտիկայում հրամատարության և քաղպաշտոնների ղեկավարությունը թույլ է կրտսերի վերաբերմամբ: Այս թերությունները վերացնելու և հետագայում հեղինակավոր կրտսեր հրամատար դաստիարակելու նպատակով և քաղաքականապես տոկուն կարմիր բանակայինների դաստիարակիչ ունենալու համար, Քաղվարչությունը առաջարկում է.*

1 Քաղաքի դպրոցների համալրման ժամանակ *վճռականապես ի կատար ածել ԽՍՀՄ ՌՀԽ հունիսի 27-ի 1927 թ. որոշումը—սոցիալական և կուս-կոմերիտական շերտավորման մասին: Ցերեկային զորամասերի քաղմարմինները գործով պետք է ապահովեն անգրագիտության լիկվիդացիան և գրագիտության մակարդակի բարձրացումը՝ նշված թեկնածուների՝ դեռ մինչև նրանց զորամաս գալը, տեղական մարմինների միջոցով, ինչպես անհատական, նույնպես և խմբակային կարգով: Բատրակների նկատմամբ այս գործի մեջ պետք է գրավել գյուղատնտեսական միության տեղական օրգաններին: Այս գործում անհրաժեշտ է, որ քաղմարմինները իրենց կողմից հայտաբերեն մաքսիմալ նախաձեռնություն: Քաղմարմինները անպայման պետք է հետևեն գնդի դպրոցների համար թեկնածուների ընտրությանը և տեղյակ լինեն այդպիսիների ցուցակների կազմելուն և հաստատելուն: Գնդի դպրոցների համալրման հետ կապված խնդիրների կարևորությունը պետք է լիակատար չափով յուրացնի ամբողջ պետկազմը: Թեկնածուներ ընտրելու գործի մեջ պիտի քաշել զորամասի կուսկազմակերպությանը:*

2. Գնդի դպրոցների քաղաքական ուսուցման և դաստիարակության տեսակետից. *Քաղվարչությունը խնդիր է առաջադրում՝ մշակել քաղպարապմունքների յերկամյա ծրագրում յեղած հիմնական հարցերը, այն-*

պես, վոր յերկրորդ տարվա ծառայության ընթացքում քաղպարապմունքների կարգով այդ խնդիրը պետք է խորացնել և լրացնել: Քաղմարմիններն ու քաղապարատները պետք է ապահովեն ծրագրի այնպիսի մշակում, վոր կրտսեր հրամատարը կարողանա ճիշտ և մտածված կերպով պատասխանել կարմիր բանակայինների հարցերին: Դրա համար քաղպարապմունքը գնդերի դպրոցներում և կրտսեր հրամկազմի խմբակների հետ պիտի տանեն ամենալավ խմբակավարները, անպայման կուսակցության անդամներից, իսկական դպրոցական պայմաններում, իսկ նրանց կարգավորումը այնպես նշանակել, վոր վորևե ընդհատում չլինի:

3. Հանրակրթական պատրաստության ժամերի թիվը գնդերի դպրոցներում առաջիկա ուսումնական տարում պետք է ավելանա մինչև 80 ժ. Այդ պարապմունքները կադրային զորամասերի գնդային դպրոցների բոլոր խմբակներում պետք է տանի հաստիքավոր ուսուցիչ, իսկ յերկրային զորամասերում—պետք է տանի հատուկ հրավիրված վորակավոր մանկավարժ, վորին պիտի վարձատրել հատուկ հատկացումներից: Կրտսեր հրամկազմի հանրակրթական պատրաստությունը պետք է շարունակվի և ծառայության յերկրորդ տարում, վորի համար կրտսեր հրամատարներին, առաջին հերթին, պետք է գրավել յերեկոյան հանրակրթական դպրոցները, ամեն կերպ ընդառաջ գնալով ինքնակրթության վերաբերյալ նրա պահանջներին:

4. Արտադպրոցական աշխատանքը գնդերի դպրոցներում պետք է իրեն առաջ առանձնահատուկ խնդիր դնի՝ բարձրացնել կրտսեր հրամատարի հանրակրթական և կուլտուրական մակարդակը և պատրաստել նրան վորպես ակտիվիստ, վորպես ամենօրյա դաստիարակիչ կարմիր բանակային մասսայի և ամրացնել նրա գոդումը ինչպես շարքային կազմի, այնպես էլ պետերի կազմի մյուս կատեգորիաների հետ: Արտադպրոցական աշխատանքը պետք է իրապես նպաստի կրտսեր հրամա-

*տարի հեղինակությունը կարմիր բանակայինների շրջանում բարձրացնելու և ամրացնելու գործին: Կրտսեր հրամկազմի գրավումը արտադպրոցական աշխատանքի մեջ պետք է շարունակվի, բայց յերբեք այն տեղը չպիտի հասցնել, վոր նա ծանրաբեռնված զգա իրեն:*

5. *Գնդերի դպրոցների ամբողջ ուսուցման աշխատանքում մաքսիմալ չափով պետք է ուժեղացնել* հրահանգչական թեքումը: *Դրա համար պետք է քաղպարապմունքների թեմաները մշակել վոչ միայն այդ պարապմունքների բովանդակության տեսանկյան տակ, այլև մշակմանը զուգընթաց կարողանալ կարմիր բանակայիններին բացատրություններ տալ զրույցների և անձնական շփման ժամանակ, նույնպես և կրտսեր հրամատարը պետք է տիրապետի մասսայական աշխատանքի հիմնական հմտություններին (անհատական ագիտացիա, մասսայական արտադպրոցական աշխատանք և այլն): Այդ աշխատանքը պետք է շարունակվի և կրտսեր հրամկազմի ծառայության յերկրորդ տարում.*

*ա) վորպես ամենորյա հրահանգում՝ նրանց վաշտի քաղղեկի կողմից, իսկ կարևորագույն խնդիրներում— զորամասի կոմիսարի (քաղոգնականի) կողմից.*

*բ) վորպես հատուկ հրահանգում ամեն կարևոր կամպանիաներից առաջ, հենվելով այն կոնկրետ հարցերի վրա և հնարավոր տրամադրությունների վրա, վորոնք կհայտաբերեն կարմիր բանակայինները.*

*գ) վորպես կրտսեր հրամկազմի գրավում մասսայական աշխատանքի բոլոր ցուցադրական ձևերի մասնակցության մեջ, ցուցադրական ձևեր, վորոնք կարող են ոգտագործվել հրահանգչական հմտությունների զարգացման և ամրացման համար.*

*դ) վորպես ձմռանը և աշնանը կրտսեր հրամկազմի կարճատև սեմինարների կատարում—կադրային զորամասերում և նախքան հավաքները՝ յերկրային զորա-*

*մասերում. այդ սեմինարներում պետի մշակել առաջիկա աշխատանքի հարցերը, մանավանդ բովանդակության կողմից:*

6. *Ամենակարևոր խնդիրն է հանդիսանում* կրտսեր հրամատարների դաստիարակությունը, ճիշտ հասկանալու կարգապահական քաղաքականության գիծը *և կարողանալ իր կարգապահական իրավունքները գործնականում կիրառել:*

*Դրա համար.*

*ա) գնդերի դպրոցներում քաղպարապմունքի կարգով պետք է վերամշակել կարգապահության մասին հարցերը ԲԳԿ. բանակում, պետք է ուժեղացնել հսկողությունը կարգապահական կանոնագրքի մշակման վրա.*

*բ) կարգապահությունն ու կարգապահական քաղաքականությունն այնպես օրինակելի ձևով պետք է տանել, որ կուրսանտները սովորեն նրանից թե ինչպես պետք է կիրառեն իրենց իրավունքները ապագայում: Նույնը և՝ կարգապահական պրակտիկայի տեսակետից, որ գործադրվում է կրտսեր հրամատարների վերաբերմամբ զորամասերում:*

*գ) ժամանակ առ ժամանակ պետք է գնդերի դպրոցներում և կրտսեր հրամկազմի հետ հատուկ զրույցներ տանել կարգապահական պրակտիկայի մասին զորամասերում, վերլուծելով այդ զրույցների ժամանակ ինչպես այլանդակ դեպքերի, այնպես էլ* պետերի կազմի *կողմից իր կարգապահական իրավունքների ճիշտ և զսպված կիրառման դեպքերը՝ գործնական օրինակներով դաստիարակել կրտսեր հրամատարի մեջ կարգապահության հարցերին մոտենալու ճիշտ գիծ: Նման զրույցներ պետի ունենան զորամասի հրամատարը կամ կոմիսարը.*

*դ) անշեղորեն դաստիարակելով կրտսեր հրամատարի մեջ պահանջկոտություն և հաստատակամություն՝ կարգապահություն մտցնելու իր ստորադաս-*

ման մեջ, վարչություն, պատվերներ ու կարգադրություններ տալու մեջ—վճռականորեն պետք է պահանջել հենց կրտսեր հրամատարից, որ նա օրինակ ցույց տա կարգապահության և ծառայության վերաբերյալ պահանջները ի կատար ածելու մեջ:

7. Քաղմարմինները և կուս. կազմակերպությունները առանձնապես ուշադրություն պիտի դարձնեն կրտսեր հրամկազմի մյուս կատեգորիայի պետերի կազմի հետ զոդումն ուժեղացնելու վրա, վճռական պայքար մղելով խորշումի դեմ և դեպի կրտսեր հրամատարները բարձրից նայելու վերաբերմունքի դեմ.

ա) պետք է վարժեցնել կրտսեր պետերի կազմին մյուս պետերի կազմի հետ զորամասի աշխատանքի կարևոր հարցերի քննարկությանը մասնակցելուն.

բ) կրտսեր հրամկազմին պետք է ԿԲ Տան ակտիվ աշխատանքի մեջ գրավել և հասարակական կազմակերպությունների մեջ քաշել, կապելով նրան այստեղ նույնպես—հասարակական աշխատանքի հետ, բոլոր մնացած պետերի կազմի հետ.

գ) բոլոր կատեգորիաների պետերի կազմի մեջ ակումբային և սպորտական աշխատանքում ընկերական շփման ձևերը պետք է ամրացնել:

8. Վերևում առաջադրած խնդիրները դեռ ավելի չափով վերաբերում են գերակետիկ կրտսեր հրամատարներին: Պետք է ուժեղացնել վերջիններիս ազդեցությունը կրտսեր հրամկազմի զինվորականների վրա, որի համար նրանք պետք է կարգապահության օրինակ տան, կարողանան վարվել կարմիր բանակայինների հետ ուսուցման և դաստիարակության ընթացքում, անընդհատ բարձրացնել գերակետիկ կրտսեր հրամկազմի կուլտուր-քաղաքական մակարդակը և նրա ռազմական պատրաստությունը, ամրացնել կապը գերակետիկ կրտսեր պետերի կազմի և կարմիր բանակայինների ու զորամասի մնացած պետերի կազմի հետ,—այս բոլորը

*քաղապարատների և կուսկազմակերպությունների ա-
մենալուրջ խնդիրներն են հանդիսանում :*

9 · *Առաջադրած խնդիրների գործնականապես վճռե-
լու հաջողությունը բավական չափով կախված է նրա-
նից, թե վորքան, ինչ չափով զորամասերում կազմա-
կերպված կլինեն կրասնը հրամկազմի ամենօրյա նյու-
թական-կենցաղային և կուլտուրական կարիքների
սպասարկումը: ՊՈԽՕ-ը քաղմարմիններից, կոմիսար-
ներից, քաղղեկավարներից և կուսկազմակերպություն-
ներից պահանջում է անդուլ ուշադրություն ունենալ
դեպի այդ կարիքները, ինչպես և ուշադիր լինել դեպի
կրասնը հրամատարների կայքի բոլոր աշխատանքնե-
րին: Պետերի կազմի ստորին օղակների ամրացումը,
վորոնք անմիջական շփում ունեն կարմիր բանակային-
ների հետ, ռեալ կերպով կարագացնի բանակի քաղաքա-
բարոյական վիճակում նկատվող թերությունների վե-
րացումը, վորոնք մատնանշված են* ԽՍՀՄ ՌՀԽ 27/VI
1928 *թ. վորոշման մեջ, կբարձրացնի կ. բանակային
մասսաների ռազմա-քաղաքական ուսուցման և դաս-
տիարակության վորակը և, ամբողջությամբ վերցրած,
կամրացնի Կարմիր բանակի մարտունակությունը :*

10 · *Ներկա դիրեկտիվում մեջ բերած միջոցառում-
ների ամբողջ գումարը կարող է խոշոր հետևանքներով
կիրառվել միայն այն պայմանով, յեթե զորամասերի
և միավորությունների* (соединение) *հրամատարական
կազմը յուրացնի նրանց կարևորությունը լիակատար
չափով և յեթե նրանց ի կատար ածելու գործում ակտիվ
մասնակցություն ունենա : Քաղմարմինների կարևորա-
գույն խնդիրն է ապահովել հրամատարական կազմի այդ
ակտիվ դերը կրասնը հրամատարի դաստիարակության
գործում :*

11 · *Ներկա դիրեկտիվը պետք է մշակել կուսակցու-
թյանն աջակցող խմբակների ակտիվի մասնակցու-*

*թյամբ կուսժողովներում և պետերի կազմի ժողովներում, մշակելով դիրեկտիվի հիման վրա կոնկրետ միջոցառումներ տվյալ զորամասի (միավորության) վերաբերյալ:*

*ԿԿԲ. Քաղվարչության պետի տեղակալ՝*

**Ի. ՍԼԱՎԻՆ**

23/25 *հուլիսի* 1928 *թ.* № 23364/*գ*

---

ՀԱՎԵԼՎԱԾ № 5

## ԱՆՑՅԱԼ ՇՐՋԱՆԻ ԴԻՐԵԿՏԻՎՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. *Հարբեցողության դեմ պայքարի մասին (Քաղվարչի շրջաբերականի հետ ուղարկած)* — № 6069/*գ.* 1/XII 27 *թ.*

2. *Հարբեցողության դեմ պայքարը ուժեղացնելու մասին* — № 6162/*գ.* — 11/II—28 *թ.*

3. *Հարբեցողության դեմ պայքարի մասին* — № 7551/*Հ.*/*գ.* — 14/II—28 *թ.*

4. *Կարգապահության մասին Կ. Կ. Բ. Ռ. Հ. Խ.* — № 34105/*գ.* — 21/IV—28 *թ. դիրեկտիվը։*

5. *Դիվիզիաների զինկոմիսարների—քաղբաժինների պետերի ԿԿ Բանակում կուսաշխատանքի հերթական խնդիրների մասին խորհրդակցության բանաձևը.* — № 6241/*գ.* — 23/IV—28 *թ.*

6. *Ստորադրյալներից պարտք վերցնելու մասին* № 6183/*գ.* — 9/III—28 *թ.*

7. *Գյուղմիասհարկի հավաքման հետ կապված աշխատանքի մասին* № 6443/*գ.* — 25/IX—28 *թ.*

8. *«Կարմիր Զինվորում» տպված նյութերի վրա զորամասերի կողմից ուշադրություն դարձնելու մասին* № 1260—25/V—28 *թ.*

9. *Բանակային խորհրդակցության բանաձևեր ինֆորմացիայի, հաշվառման և վիճակագրության վերաբերյալ.—բյուլլետեն ԿԿԲ. Քաղվարչի* № 6—28 *թ.*

10. *ԽՍՀՄ ՌՀԽ որոշումը Բ. Գ. Կ. Բ. քաղաքաբարոյական վիճակի մասին (Քաղվարչի դիրեկտիվի հետ ուղարկած)* № 28/349/գ.—№ 6391/գ.—16/VIII—28 *թ.*

11. *Կոմյերիտմիության մեջ հիվանդագին չերեվույթների մասին (ինֆորմացիոն նամակ)* № 6319/գ.—16/VI—28 *թ.*

12. *Մեթոդական ցուցումներ հակակրոնական պրոպագանդի վերաբերյալ*—№ 390—19/XII 1927 *թ.*

13. *Ինքնակրթական աշխատանքի մասին*—№ 446—28/XII—1927 *թ.*

14. *Պետերի կազմի և ազգայնական տրամադրությունների մասին դիվիզիաների ռազմկոմիսարների—քաղբաժինների պետերի խորհրդակցությունների բանաձևերը—բյուլլետեն Կ[illegible]վարչի* № 2—27 *թ.*

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0044986

[154]

A $\frac{I}{8070}$